

Լիանա Սեյրանյան
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետ, մագ. 1-ին կուրս
Գիտ. դեկ.՝ ք. գ. ք. Մ. Ֆելեքյան
Էլ. փոստ՝ liana-sevranyan@mail.ru

ԲԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԸՍԲՈՆՈՒՄԸ ՀԱՅ ԼԵՃՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՃ

Բարդությունը բառակազմության այն եղանակն է, երբ երկու կամ ավելի հիմնական ձևայինների կամ առանձին, ինքնուրույն բառերի միացումով՝ կցումով կամ հարադրությամբ, նոր բառեր են կազմվում:

Իբրև բառակազմության էական միջոցներից մեկը՝ բարդությունը, հայոց լեզվին ծառայում է իր տարբեր ենթատեսակներով և ենթաձևերով:

Ուսումնասիրելով հայերենի բառակազմությունը՝ Մ. Աբեղյանը հայերենի բարդությունները բաժանում է 3 տեսակի՝ հարադրական, կցական և իսկական¹: Ըստ Մ. Աբեղյանի բնութագրությունների՝ հարադրությունները թեպետ մեկ բառի նշանակություն ունեն, բայց մեկ բառ չեն համարվում և միացած չեն գրվում (գիշեր-ցերեկ, թույլ տալ), կցական բարդությունները թե՛ նշանակությամբ, թե՛ գրության ձևով մեկ բառ են՝ առաջացած լեզվի շարահյուսական ձևերից (գործածել), իսկական բարդությունների բաղադրիչ մասերը միշտ միացած իբրև մեկ բառ են գրվում, և երկուսը միասին մեկ նշանակություն ունեն (թանաքաման):

Բնորոշելով իսկական բարդությունները՝ Մ. Աբեղյանը գրում է. «Իսկական բարդությունները կազմվում են այս ընդհանուր կանոնով. 1) Բարդության երկու մասերի մեջ մտնում է ա ձայնավորը, որը կոչվում է հողակապ... 2) Բարդության առաջին մասի համար առնվում է եզակի ուղղական հոլովը... 3) Բարդության առաջին անդամի վերջի փակ վանկի ձայնավորները, մնալով անշեշտ, կրում են ձայնափոխություն»²:

Մ. Աբեղյանը իսկական բարդության մեջ նշում է և՛ հողակապով (ջրատար), և՛ անհողակապ կազմություններ (ջրկիր):

Մ. Աբեղյանը, խոսելով հարադրության մասին, հարադրության տեսակ է համարում նաև բաղիյուսական հարադրությունը, կցականի մեջ՝ առանձնացնում է հարադրական բայերով կցական բարդություններ, բաղիյուսական հարադրություններով և կրկնավորներով կցական բարդություններ:

Գուրգեն Սևակը մասնակիորեն զարգացրեց Մ. Աբեղյանի դասակարգումը՝ ավելացնելով նաև չորրորդ տեսակը՝ հապավական բարդությունները՝ նորագույն հապավումներ անվանումով³: Մ. Աբեղյանի եռյակ բաժանումը վերափոխեց երկյակ բաժանման՝ իսկական բարդություններ (սիրատենչ, քարտաշ) և անիսկական բարդություններ հակադրությամբ՝ անիսկական բարդությունների տեսակներ համարելով բոլոր հարադրությունները (գիշեր-ցերեկ, թույլ տալ), կրկնավորները (քիչ-քիչ), բաղիյուսական (խեղճ ու կրակ) և կցական (գործածել) բարդությունները: Սուր քննադատության առարկա են դառնում իսկական և անիսկական բարդությունների անվանումները: Մ. Աբեղյանի և Գ. Սևակի բարդությունների դասակարգման գլխավոր հիմունքն են համարում պատմական մոտեցումը:

Ըստ էդ. Աղայանի՝ բաղադրյալ բառերը բաժանվում են 2 տեսակի՝ վերլուծա-

կան և համադրական բաղադրությունների: Դրանով իսկ բարդություն տերմինը տրվում է միայն այն բառերին, որոնք ներկայացնում են 2 կամ ավելի հիմնական ձևայինների միավորումը մեկ բառում (աշխարհաճանաչողություն):

Ըստ իրենց բառակազմական եղանակների ու կառուցվածքային առանձնահատկությունների՝ էդ. Աղայանը բոլոր բարդությունները բաժանում է 4 տեսակի՝ բուն կամ իսկական, կցական կամ կապակցական, կրկնական և հատվածական: Նա, պահպանելով Մ. Աբեղյանի տերմինը (իսկական), այնուամենայնիվ, գերադասում է բուն բարդություն անվանումը: Էդ. Աղայանը բուն կամ իսկական բարդությունների բնորոշման հիմքը համարում է այն, որ դրանք բնութագրվում են երկու բաղադրական հիմքերի՝ սերող և բաղադրող հիմքերի առկայությամբ: Առանց այդ երկու հիմքերի բուն կամ իսկական բարդություն չկա: Սերող և բաղադրող հիմքերով կազմված ամեն մի բարդություն բուն բարդություն է (տնամերձ, թռչնորս): Էդ. Աղայանը կցական է համարում այն բարդությունները, որոնք ստացվել կամ ստացվում են վերլուծական բաղադրություններից՝ նրանց բաղադրիչների միավորումով, կցումով (կեսօր)¹: Բոլոր վերլուծական բաղադրությունները բառակապակցություններ են: Կցական բարդությունների բաղադրիչները սովորաբար շեշտափոխական հնչյունափոխությունների չեն ենթարկվում:

Կրկնական բարդությունները կարող են կազմվել բառի անփոփոխ կրկնությամբ, կամ էլ՝ փոփոխված ձևերով (չար-չար, ձեն-ձուն): Կրկնական բարդությունները ներկայացնում են ամբողջական բառի կամ նրա մի մասի կրկնությունը մեկ բառի կազմում: Էդ. Աղայանը կրկնական բարդություն է համարում կրկնությամբ կազմված կցական բարդությունները (բարբառ): Էդ. Աղայանը տարբերում է հարադրությունները (չորս աչքանի) կցական բարդություններից (չորսաչքանի) ու գտնում, որ աստիճանաբար հաղթանակում է մեկ բառի՝ կցական բարդության վերածված ձևը:

Ըստ էդ. Աղայանի՝ կրկնական բարդություններն իրենց կազմության եղանակով կարող են լինել թե՛ կցական (չարչարել), թե՛ համադրական (չարաչար): Նա առանձնացնում է որպես չորրորդ տեսակ հատվածական բարդությունները, որոնք հատվածական բաղադրիչների միավորումով կազմվող բարդություններ են (ռուս-հայկական): Դրանք նույնանուն են կցական բարդությունների հետ, բայց տարբերվում են նրանցից իրենց բաղադրական հիմքերի յուրահատկությամբ. հատվածական բարդությունների բաղադրող հիմքը միշտ բաղադրյալ է: Սերող հիմքը էդ. Աղայանը կոչում է հատվածական հիմք:

Գուրգեն Սևակի համանմանությամբ Լ. Եզեկյանը ըստ բարդության բաղադրիչների միմյանց նկատմամբ ունեցած հարաբերակցության և նրանց շարահյուսական կապակցության՝ բարդությունները բաժանում է 2 խմբի՝ վերլուծական և համադրական:

Այս բաժանումն ենք տեսնում նաև Ա. Սուքիասյանի գրքում: Լ. Եզեկյանը և Ա. Սուքիասյանը, ինչպես նաև Ալ. Մարգարյանը վերլուծական բարդության 3 տեսակ են առանձնացնում՝ կրկնավոր, հարադրական և բաղիյուսական բարդություններ:

Կրկնավորները նույն բառի կրկնությամբ կազմված հարադրական բարդություններ են: Կրկնավոր բարդությունները կազմվում են հայերենի տարբեր խոսքի մասերին պատկանող բառերի կրկնությամբ (սուսիկ-փուսիկ, ռիկ-մնջիկ):

Հարադրական են այն բարդությունները, որոնք կազմված են մեկից ավելի բաղադրիչներից և գրվում են անջատաբար: Հարադրությունները լինում են անվանական (աղմուկ-աղաղակ) և բայական (միտք անել): Անվանական հարադրական բարդություններ են կոչվում որևէ անուն խոսքի մասի պատկանող տարբեր բառերի հարադրությամբ կազմված բարդությունները²:

¹ Տես Աբեղյան Մ., Երկեր, հատոր 2, Երևան, 1974, էջ 135:

² Նույն տեղում, էջ 137:

³ Տես Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 2009, էջ 165:

¹ Տես Աղայան էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 271:

² Տես Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1990, էջ 65:

Անվանական հարադրական բարդություններ կարող են կազմվել նյութական իմաստ արտահայտող գրեթե բոլոր խոսքի մասերով՝ գոյական, ածական, մակբայ, թվական: Բայական հարադրությունները կազմվում են որևէ գոյականով, մակբայով, ածականով, թվականով, ինքնուրույն գործածություն չունեցող արմատներով և մեկ բայի կապակցությամբ, ինչպես նաև 2 բայերի զուգահրությամբ, որոնք ունեն բառային առանձին իմաստ և մեկ ընդհանուր շեշտ:

Ա. Սուքիասյանը տալիս է հարադրական բայերի 2 անվանումներ՝ զուգահրական բայեր կամ զուգաբայական հարադրություններ, որոնք կազմվում են 2 անկախ բայերից (ուտել-խմել), հարադրական կամ հարադրավոր բայեր, որոնք կազմվում են բայից և հարադրից (միտք անել)¹:

Ալ. Մարգարյանը բայական հարադրությունները բաժանում է 3 խմբի՝ հարադիր բայեր, զուգահրական բայեր, պատճառական հաբադիր բայեր²: Այս տեսակետին է հարում նաև Լ. Եզեկյանը:

Բաղիյուսական բարդություններ են կոչվում այն հարադրական բարդությունները, որոնց բաղադրիչներն իրար նկատմամբ համագոր են և միանում են ու կամ և շաղկապով(աղ ու հաց, ահ ու դող): Բաղիյուսական բարդության բաղադրիչները սովորաբար իրար հետ առնչակից կամ հարաբերակից բառեր են, որոնք կարող են արտահայտել զանազան կապեր ու հարաբերություններ: Դրանք կարող են կազմվել հոմանիշ, հականիշ, երբեմն էլ իմաստով առնչակից կամ հարաբերակից բառերի հարադրությամբ³:

Համադրական են կոչվում այն բարդությունները, որոնք կազմվում են համադրության եղանակով, որոնց բաղադրիչները հանդես են գալիս միասնաբար և ունեն մեկ ընդհանուր բառային շեշտ: Համադրական բարդությունները բաժանվում են 2 խմբի՝ կցական և իսկական: Կցական են այն համադրական բարդությունները, որոնց մեջ մտնող բաղադրիչները հանդես են գալիս միասնաբար, ունեն բառային մեկ շեշտ, գրվում և արտասանվում են իբրև մեկ բառ, բայց բաղադրիչների շարահյուսական կապը թույլ է, և նրանցից յուրաքանչյուրը ցանկացած դեպքում կարող է առանձին գործածություն ունենալ: Կցական բարդությունները կազմվում են շարահյուսական կապակցություններից, տարբեր տիպի հարադրություններից, կրկնավորներից (կեսօր, դողդողալ): Իսկական են համարվում այն բարդությունները, որոնք կազմվում են մեկից ավելի հիմնական ձևայիններից կամ արմատական բառերից: Իսկական բարդության երկու բաղադրիչների միջև մտնում է ա հոդակապը, կամ բարդությունը լինում է նաև անհոդակապ (հացթուխ, արևածագ):

Ինչպես նշում է Մ. Աբեղյանը. ա հոդակապի ծագումը կապվում է բառահիմքի վերջին ա ձայնավորի հետ: Հայերենի մի շարք բառերում ա ձայնավորը սկզբնապես եղել է արմատական, հանդես է եկել բարդություններում:

Որպես բառակապակցության տեսակ Պ. Պողոսյանը չի առանձնացնում բարդություն անունը և անդրադառնում է միայն կրկնավորներին և հարադրավորներին:

Պ. Պողոսյանը անվանական հարադրության բաղադրիչները 3 կարգի իմաստային հարաբերությունների է բաժանում և տալիս նույնական, առնչական և հակադրական անվանումները: Նույնական են այն անվանական հարադրությունները, որոնց բաղադրիչները նույն իմաստն ունեն կամ իմաստով մոտ են (ախ ու վախ): Առնչակցական են այն անվանական հարադրությունները, որոնց բաղադրիչներն իմաստով առնչակից բառեր են (խելք ու միտք): Հակադրական կապակցությամբ կազմվածներն արտահայտում են 2 ծայրաթևերի միջև եղած ընդգրկում (ամառ-ձմեռ):⁴

Բարդության այսքան տեսակների և այսքան անվանումներից այսօր հայ

լեզվաբանության մեջ նախընտրությունը տրվում է վերլուծական և համադրական բարդություններ գիտաբաներին, քանի որ վերլուծական բարդության տեսակների՝ կրկնավոր (արագ-արագ), հարադրական (կոշտ-կոպիտ, միտք անել) և բաղիյուսական (լաց ու կոծ) բարդությունների բաղադրիչները կազմվում են վերլուծական եղանակով, և դրան հակառակ՝ համադրական բարդությունների տեսակների՝ կցական (այսօր) և իսկական (հրածիզ) բարդությունների բաղադրիչները համադրության եղանակով:

Лиана Сейранян

ПОНЯТИЕ СЛОЖНОСТИ В ОБЛАСТИ ЛИНГВИСТИКИ

В Армянской лингвистике глубоко изучалась сложность. К сложности обращали внимание М. Абегиан, Эд. Агаян, Г. Севак, А. Сукиасян, П. Погосян, А. Маргарян, Л. Езекян и другие лингвисты. Сложность - это вид словосочитание, когда два или более основных видов или соединение основных образований или двух основных самостоятельных слов с приставкой, новые слова образуются. Сложность бывает двух видов - аналитический и объединенный. Аналитический бывает трех, а объединенный - двух видов. В современном армянском языке сложность имеет активное употребление.

Liana Seyranyan

THE NOTION OF DIFFICULTY IN LINGUISTICS

Difficulty is a subject to deep study in Armenian linguistics. Such linguists as M.Abeghyan, Ed.Aghayan, G. Sevak, A. Sukiassyan, P.Poghosyan, A.Margaryan,L.Ezekyan and others have appealed to it. Difficulty is the type of word formation, when two and more main words or word. collocatious make a new word via merger. There two types of difficulty-analytical and comparative. Repetation and word-forming are the types of analytical difficulty whereas the original and the merging are those of the comparative type.The difficulty is frequeatly in the modern Armenian language.

¹ Տե՛ս Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1999, էջ 233:

² Տե՛ս Մարգարյան Ալ., էջ 84:

³ Տե՛ս Նույն տեղում, էջ 76:

⁴ Տե՛ս Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, Երևան, 1990, էջ 213: